

2281

Handwritten text in Georgian script, possibly a name or title.

Handwritten text in Georgian script, possibly a name or title.

84
—
V-86

Handwritten text in Georgian script, possibly a name or title, dated 1900.

ՄՈԼԻԵՐ

196

Ed. Plancher

ԹՈՂՈՂ ԲԺԻՇԿՆ

(Le Medecin Volant)

Շրանգրիկի քարգմանից, Մելիք Յ. Պելլիսեան

84
Մ-86

ԲԱՅՈՒՆ
Տպարան «Ս. Բ. Օ. Ր.»
1900.

2011

2003

84
5-86

ՄՈԼԻԵՐ

ԹՈՂՈՂ ԲԺԻՇԿՆ

(Le Medecin Volant)

Ճրանսերէնէ բարգմանեց, Մելիք Յ. Պէլլիքեան



ԲԱԳՈՒ
Տպարան „ԱՐՕՐ“

1900

УПРАВЛЕНИЕ

29419-42

УПРАВЛЕНИЕ

(L. E. Fauquier)

Дозволено ценз. Тифлисъ, 9-го Феврала 1900 года.



12434.58



Настоящая пьеса, подь загл. „Летучій врачъ“
разрѣшена Г. И. Об. Главнначальствующаго для
представленія на сценахъ края Марта 1 дня
1900 г. Тифлисъ.

Предсѣдатель Комитета М. Гакель.

Секретарь Н. Меликъ-Нубаровъ.

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱԼԷՌ՝ ՍՍՊՈՒՆ

Վալէռ.

է, լաւ, Սապին, ի՞նչ խորհուրդ կտաս ինձ:

Սապին,

Իսկապէս շատ լուրեր կան: Հօրեղբայրս վճռապէս կ'ուզէ որ հօրեղբորաղջիկս ամուսնանայ Վիլյարըքէնի հետ, եւ գործերն այնքան յառաջացած են որ մինչեւ այսօր պսակուած կըլինէին եթէ քեզ չըսիրէր նա. բայց որովհետեւ հօրեղբորաղջիկս ձեզ համար ունեցած սիրոյն գաղտնիքն ինձ յայանեց եւ կծծի հօրեղբորս ագահութիւնն մեզ ծայրայեղութեան մղեց, մի լաւ գիւտ գտանք ամուսնութիւնը յետաձգելու համար: Սա որ հօրեղբորաղջիկս, այս ժամէս սկսաւ հիւանդ ձեւանալ. եւ միամիտ ծերուկն որ շատ դիւրահաւատ է, զիս զրկեց բժիշկ կանչելու: Եթէ կարենայիք ձեր լաւ բարեկամներէ մինն ուղարկել որ մեզ հետ համամիտ լինէր եւ հիւանդին խորհուրդ տար գաշտային օդ ծծել, ծերուկը իսկոյն մեր պարտէզի ծայրն գտնուող սա գղեակն կը զրկէր բնակելու հօրեղբոր աղջիկս, եւ այս միջոցով կարող կըլինէիք, առանց մարդուկն իմանալու տեսակցել, ամուսնանալ, եւ թողուլ որ նա ուղածին չափ գանգատուի իր Վիլյարըքէնի հետ:

Վալէռ.

Բայց այսքան շուտ ի՞նչպէս գտնել իմ տեղս մի բժիշկ՝ եւ այն ալ հաւանի ինձ համար ինքզինք

Ա Ն Զ Ի Ն Գ.

Կօրծիպիւս Լիւսիլի հայրն
 Լիւսիլ Կօրծիպիւսի աղջիկն
 Վալէռ Լիւսիլի սիրահարն
 Սապին » հօրեղբոր աղջիկն
 Սեանարեկ Վալէռի ծառան
 Կրօ-Ռընէ Կօրծիպիւսի ծանան
 Մի փաստաբան

վտանգել: Անկեղծօրէն կըսեմ որ այդպէս ոչ ոք
կըճանաչեմ:

Սապիճ

Ես մի բան մտածեցի, եթէ ձեր ծառան իբր
բժիշկ հազուեցնէք, պարզմիտ ծերուկն խարեն
չատ գիւրին է:

Վալէո

Նա մի թանձրամիտն է որ ամեն բան կըխան-
գարէ. բայց պէտք է զայն գործածել առ ի չգոյէ
ուրիշի: Մնաք բարով, երթամ գտնեմ զինքն: Այժմ
ո՞ւր ձարել այդ կոպիտն. բայց ահա նա, լաւ պա-
տահեցաւ:

ՏԵՍԻԼ Բ.

ՎՍԼԷՌ, ՍՔՍՆՍՐԷԼ

Վալէո

Ո՛հ իմ խեղճուկ Աքանարէյս, որքան ուրախ
եմ քեզ տեսնելով: Քեզ պէտք ունիմ մի կարեւոր
գործի մէջ. բայց որովհետեւ չգիտեմ թէ զու ի՞նչ
ընել գիտես...

Սեանարէլ

Թէ ի՞նչ ընել գիտեմ, պարոն, զուք միմիայն
ձեր կարեւոր գործերին եւ կամ ծանր բաների ծա-
ռայեցրէք զիս, զօրօրինակ, զրկեցէք տեսնելու մի
ժամացոյց թէ ժամը քանի՞մն է, թէ կարագն չու-
կայու՞մ ի՞նչ արժէ, մի ձիւ ջուր տալու. այն ատեն
կըհասկնաք թէ ես ինչ ը՞նել գիտեմ:

Վալէո

Խնդիրն այդ չէ. հարկ է որ բժիշկ ձեւանաս:

Սեանարէլ

Ես, բժիշկ, պարո՞ն. ինչ կ'ուզէք գործադրե-
լու պատրաստեմ. բայց բժիշկ կեղծելու մէջ ձեր
խոնարհ ծառան եմ ոչինչ ընելու համար, եւ որ
տեղից յարմարցնեմ, Աստուած իմ: Ծջմարիտ վկայ,
պարոն, զուք կը ծաղրէք զիս:

Վալէո

Եթէ այս գործն ընես, օն, քեզ տասն ոսկի
կտամ:

Սեանարէլ

Հա, տասն ոսկուով, ես չ'ըսի թէ բժիշկ չեմ
կարող լինել, որովհետեւ պարոն կը տեսնէք որ ես
այնքան, այնքան ալ նուրբ հասկացողութիւն չու-
նիմ, ճիշտն ըսած: Բայց երբ բժիշկ լինիմ՝ ո՞ւր պի-
տի երթա՞մ:

Վալէո

Պարզամիտ կօրծիպիւտի տունն՝ տեսնելու իր
աղջիկն որ հիւանդ է՝ բայց զու այնքան թանձրա-
միտ ես, որ գործն չ'ընելու տեղ՝ գործն կը...:

Սեանարէլ:

Ո՛հ, Աստուած իմ, պարոն, երբէք հող մի ընէք.
ըսեմ ձեզ որ ես կարող եմ աւելի լաւ մարդ մեռ-
ցընել քան թէ քաղաքի մի ո եւ է բժիշկն: Առ-
հասարակ մի առած կայ որ կըսեն. «Յետ մահուան
բժիշկ». իսկ զուք պիտի տեսնէք որ եթէ ես խառ-

նուրմ՝ գործին, պիտի բռնն. «Յետ բժշկի զգոյշ մահից»։ Այսու հանդերձ կը մտածեմ որ բժիշկ կեղծեին դժուար է, եւ եթէ շնորհքով մի բան անել չի կարողանա՞մ։

Վալէռ

Այս գործէն աւելի դիւրին ոչինչ կայ, Կորժիպիւռ մի այնպիսի պարզ, տխմար ժարդ է որ թոյլ կըտայ քեզ որ գլուխն տանիս քո ճառերով, միայն թէ Հիփոկրատէն եւ Կալիէնէն խօսիս եւ մի քիչ ալ պիճնդ երես լինիս։

Սֆանարէլ

Այսինքն հարկ է նորան խօսել փիլիսոփայութեան՝ հաշուագիտութեան վրայ։ Թողէք ընեմ, եւ թէ, ինչպէս որ դուք կըսէք, նա դիւրահաւան մարդ է, ամեն բան յանձն կառնեմ, միայն եկէք ինձ բժշկի ըզգեստ առէք, եւ սովրեցրէք ինչ որ հարկ է ընել եւ տուէք արտօնագիրս որ է խօստացուած 10 ոսկին։

(Վալէռ եւ Սֆանարէլ կ'երթան)

ՏԵՍԻԼ Պ.

ԿՐՕԺԻՊԻԻՍ, ԿՐՕ-ՌԸՆԷ

Կորժիպիւս.

Շուտ գնա մի բժիշկ ճարէ, վասն զի աղջիկս շատ հիւանդ է եւ չտապէ։

ԿՐՕ-ՌԸՆԷ,

Այս ինչ սատանի բան է, ինչո՞ւ ձեր աղջիկն կուզէք մի ձերուկի տալ. կըկարծէք որ իր ցաւին

պատճառն մի երիտասարդ ամուսին ունենալու փափաքն չէ՞։ Կըտեսնէք թէ ինչ առնչութիւններ կան, եւ այլն։ (անհասկնալի խօսքեր)։

Կորժիպիւս.

Շուտ գնա, կըտեսնեմ որ այս հիւանդութիւնն երկար պիտի յետաձգէ հարսանիքն։

ԿՐՕ-ՌԸՆԷ.

Եւ այդ է որ զիս կը կատաղեցնէ, յոյս ունէի որ փորս լեցնեմ, եւ ահա զրկուեցայ։ Երթամ մի բժիշկ գտնեմ աւելի ինձ համար քան թէ ձեր աղջկայ. յուսահատել եմ։

(Կը մեկնի)

ՏԵՍԻԼ Պ.

ՍՍ.ՊԻՆ, ԿՐՐԺԻՊԻԻՍ, ՍԲԱՆԱՐԵԼ

Սապին.

Հօրեղբայր, լաւ պատահեցայ ձեզ, լաւ լուր ունիմ հաղորդելու։ Ձեզ կըբերեմ աշխարհի ամենաճարտար բժիշկն, մի մարդ որ օտար երկրէ կըզայ, մեծ գաղտնիքներ գիտէ. եւ որ անպատճառ կ'առողջացնէ հօրեղբօր աղջիկս, ինձ դիպուածով ցոյց տուին եւ ահա ձեզ բերի։ Այնքան իմաստուն է, որ բոլոր սրտով կուզէի հիւանդ լինել որպէս զի նա զիս բժշկէ։

Կորժիպիւս

Ո՞ւր է ուրեմն։

Սապին.

Ահաւասիկ նա որ ինձ կըհետեւի, տեսէք, ահաւասիկ։

Կօրծիպիւս

Պարոն բժշկի ամենախոնարհ ծառան եմ: Ես հրաւիրեցի ձեզ տեսնելու աղջիկս որ հիւանդ է: բոլոր յոյսս ձեզ վրայ է:

Սեանարէլ.

Հիփոկրատ կրտէ, եւ Կալիէն բանաւոր պատ-
ճառաբանութեամբ կըհաստատէ, որ մի մարդ ինք-
զինք լաւ չի զգար՝ երբ հիւանդ է: Դուք իրաւունք
ունիք ձեր յոյսն իմ վրայ դնելու, վասն զի ես եմ,
ամենամեծ, ամենաճարտար, ամենահմուտ բժիշկն,
բուսականութեան, զգայարանաց եւ հանքային հա-
մալսարանի:

Կօրծիպիւս

Շատ կը հիանամ:

Սեանարէլ

Ձեր մտքէն չանցնի թէ ես մի հասարակ
բժիշկ եմ, կամ քաղաքային մի բժիշկ եմ: Իմ կար-
ծեօք միւս բոլոր բժիշկներն ուրիշ բան չեն՝ այլ
միայն բժիշկների վիժուկներ: Ես մասնաւոր տա-
ղանդ ունիմ. ես գաղտնիքներ ունիմ: Սէլամայիկ:
Ռօզրիկ ցանկութիւն ունի՞ս. սիկտօր սի, սիկտօր
նօ: Բեռ օսնիա, սեգուրս սեգուրօրիւմ: Բայց զեռ
չատ են. քիչ ձեզ ալ քննենք:

Սապին.

Ո՛հ, հիւանդն սա չէ, սորա աղջիկն է:

Սեանարէլ.

Փոյթ չէ, հօր արիւնն աղջկայ արիւնն միեւ-
նոյն բանն են, եւ հօր արեան խանգարումով ես

կարող եմ հասկնալ աղջկայ հիւանդութիւնն: Պա-
րոն Կօրծիպիւս, կարելի է արդե՞օք ենթակայի մէջն
տեսնել:

Կօրծիպիւս.

Այո, այո, Սապին, գնա աղջկանս մէջն բեր—
(Սապին կը մեկնի): Պարոն բժիշկ, շատ կըվախեամ
որ չըլլա թէ մեռնի:

Սեանարէլ.

Օ՛հ, թող զգուշանայ, պէտք չէ որ առանց բժշկա-
կան զեղազրի մեռնելու զուարճութիւնն ունենայ:
(Սապին ներս կը մտնէ): Ահա մէկ որ ցոյց կըտայ
մեծ տաքութիւն, աղիքների մեծ բորբոքումն, եւ
սակայն այնքան ալ անախորժ չէ:

Կօրծիպիւս

Եւ ի՞նչ պարոն, կըլմա՞ք:

Սեանարէլ.

Սորա վրայ մի զարմանաք, բժիշկներն առհա-
սարակ գիտելով կըբաւականան, իսկ որ ես սովո-
րականէն դուրս բժիշկ եմ, կըլմամ, վասն զի համովն
կարող եմ աւելի լաւ որոշել հիւանդութեան պատճա-
ռըն եւ իմանալ հետեւանքներն: Բայց ձիշտն ըսած,
չատ քիչ էր մի լաւ գատողութիւն ընելու համար.
Թող գարձեալ միզել տան:

Սապին.

(Դուրս կենէ եւ կըղառնայ) միզել տալու
համար շատ նեղութիւն կրեցի:

Սեաղարէլ.

Այս ի՞նչ է, այս շատ քիչ է: Միզել տուէք

առատօրէն, առատօրէն: Եթէ ամեն հիւանդ այսպէս միզէր, ամբողջ կեանքս բժիշկ կըմնայի:

Սապին.

(Դուրս կելնէ եւ կը դառնա) Ահա ամենն այսքան կարելի է ստանալ. աւելի միզել չէ կարող:

Սեանարէլ.

Ինչպէ՞ս, պարոն Կօրժիպիւս, ձեր աղջիկն միայն կաթիլ, կաթիլ կըմիզէ, ահա մի խեղճուկ միզող է ձեր աղջիկն. կըտեսնեմ թէ հարկ պիտի լինի որ միզելու դեղ տամ իրան: Կարելի՞ է արդեօք հիւանդն տեսնել:

Սապին.

Անկողնէն ելաւ, եթէ կըկամենաք զինքն բերեմ:

ՏԵՍԻԼ Ե.

ՍՍՊԻՆ, ԿՕՐԺԻՊԻԻՍ, ՍԲԱՆՍԱՐԷԼ, ԼԻԻՍԻԼ.

Սեանարէլ.

Լաւ ուրեմն, հիւանդ էք օրիորդ:

Լիւսիլ.

Այո պարոն:

Սեանարէլ.

Այդ վատ, դա նշան է որ դուք լաւ չէք զգար: Գլխի եւ երակների մեծ ցաւեր ունիք:

Լիւսիլ:

Այո պարոն:

Սեանարէլ.

Շատ նման է: Այն մեծ բժիշկն անասնոց բնու-

թեան վրայ գրած երկի մէջ... հարիւրաւոր լաւ բաներ կըսէ եւ ըստ-որում առնչութիւն ունեցող խառնուածքներն շատ յարակցութիւն կունենան, վազն զի օրինակի համար, ինչպէս որ մելամաղձոտութիւնն զուարթութեան հակընդդէմ է եւ մարմնոյ մէջ տարածուող մաղձը մարդս կըղայկահարէ, եւ առողջութեան միակ հակառակորդն հիւանդութիւնն է, հետեւապէս այն մեծ մարդուն հետ կարող ենք ըսել թէ ձեր աղջիկը ծանրապէս հիւանդ է: Պէտք է որ մի դեղ տամ:

Կօրժիպիւս

Շուտ, սեղան, թուղթ, թանաք:

Սեանարէլ.

Գրել գիտցող մէկը կա՞յ արդեօք:

Կօրժիպիւս.

Միթէ՞ դուք բնաւ չգիտէք գրել:

Սեանարէլ.

Ահ այդ չեմ յիշեր: Մտքիս մէջ այնքան գործ ունիմ որ կէսն կըմոռնամ... Կարծեմ թէ հարկ պիտի լինի որ ձեր աղջիկն քիչ օդ առնէ, զբօսնու դաշտն:

Կօրժիպիւս.

Մի շատ դեղեցիկ պարտէզ ունինք, եւ մի քանի սենեակներ կան նորա կից, եթէ դուք յարմար կը դատէք՝ այնտեղ բնակեցնեմ:

Սեանարէլ.

Երթանք տեղն տեսնենք:

(Բողոքը կը մեկեկել):

ՏԵՍԻԼ Զ.

ՓԱՍՏԱԲԱՆՆԵ (առանձին)

Լսեցի թէ Կորժիպիւսի աղջիկն հիւանդացել է, հարկ է իր առողջութեան մասին տեղեկութիւն ստանալ, եւ իբր ընտանեաց բարեկամ իմ ծառայութիւնս առաջարկեմ: Ափսոս, ափսոս, արդե՞օք պարոն Կորժիպիւսն կը հասկնայ այս բանն:

ՏԵՍԻԼ Է.

ԿՕՐԺԻՊԻՒՍ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵ

Փաստաբանն.

Տեղեկանալով ձեր օրիորդ աղջկայ հիւանդութեանն, եկայ յայտնել ձեզ իմ ցաւակցութիւնս, եւ առաջարկել ձեզ ինչ որ կարող եմ ընել:

Կորժիպիւս.

Ես, այնտեղ, ներսն, մի ամենախելացի մարդու հետ էի:

Փաստաբանն.

Արդեօք կարելի՞ է մի վայրկեան նորա հետ տեսակցիլ:

ՏԵՍԻԼ Ը.

ԿՕՐԺԻՊԻՒՍ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵ, ՍԲՆՆԱՐԷԼ

Կորժիպիւս

Պարոն, ահաւասիկ իմ բարեկամներէ մի շատ խելացի անձնաւորութիւն, որ կըցանկանայ ձեզ հետ խօսակցիլ:

ՍԲՆՆԱՐԷԼ.

Պարապ ժամանակ չունիմ, պարոն Կորժիպիւս, պարտաւոր եմ հիւանդների մօտ երթալ: Պարոն, չեմ կարող ձեզ մօտ մնալ:

Փաստաբանն.

Պարոն, լսելէ վերջ այն ինչ որ պարոն Կորժիպիւս ինձ ըսաւ ձեր արժանեաց եւ գիտութեան մասին, ամենաբուն բաղձանք զգացի ձեզ հետ ծանօթանալու պատիւն ունենալու համար, եւ համարձակեցայ ձեզ ողջունել այս մտածութեամբս. յոյս ունիմ որ անհաճոյ չէք գտներ այս: Հարկ է խոստովանիլ թէ մեծ գովեստից արժանի են նրանք որ կըբազուին որ եւ է գիտութեամբ, եւ մանաւանդ նոքա որ բժշկութիւնն ի գործ կըդնեն, թէ սորա օգտակարութեան պատճառաւ եւ թէ որովհետեւ նա կըպարփակէ ուրիշ շատ գիտութիւններ. այդ է որ բժշկութեան կատարեալ ուսումն կըդժուարացնէ: Շատ ի դէպ կըսէ Հիփոկրատ իր առաջին աֆօրիզմի մէջ:

Վիրսս ւրեվիս, արս, վիքո յօնկա, օգգազիօ, օրիւս վիրկուէիս, քփսքիւսկենքուս, ժիւսիւսիուս, բէրիփոջուս, իփփիլիլիլի:

ՍԲՆՆԱՐԷԼ՝ ԿՕՐժԻՊԻՒՍԻՆ.

Ճիշդիկ քանիքնարօրս, պատիշ գանկուսիպիւս:

Փաստաբանն.

Դուք այն բժիշկներէ չէք որոնք միմիայն կըհետեւին այն բժշկութեան որ կըկոչուի բնա-

պաշտական կամ վարդապետական, եւ կարծեմ թէ դուք զայն կըգործադրէք ամեն օր մեծ յաջողութեամբ, եխքերիկերիս մածխարարեռում: Այն առաջին անձնաւորութիւնք որոնք բժշկութեան սկսան՝ այնքան յարգուեցան այդ գեղեցիկ գիտութիւնն ունենալու համար որ աստուածների կարգն դրուեցան իրանց ամենօրեայ հիանալի բուժումների պատճառաւ: Պէտք չէ մեղադրել բժիշկն եթէ հիւանդին առողջութիւնն չի վերահաստատէ, քանի որ այդ իր գեղերէ եւ իր հմտութենէ բացարձակ կախումն չունի. ինքերսում soqբա բըռա վաշեք արքե մաշում: Պարոն ձեզ ձանձրացնելէ կըվախնամ, հրաժեշտ կառնեմ այն յուսով որ առաջին պատահման պատիւ պիտի ունենամ տեսակցիլ ձեզ հետ աւելի երկար: Ձեր ժամերն թանկագին են ձեզ եւ այն:

(Փաստարանն կըմեկնի)

Կօրծիպիւս.

Այս մարդն ի՞նչպէս կերեւի ձեզ:

Մեանարէլ.

Մի քանի չնչին բաներ գիտէ: Եթէ մի քիչ ալ մնար. մի բարձր եւ վսեմ նիւթ պիտի առաջարկէի իրան: Եւ սակայն հրաժեշտ կառնեմ ձեզնէ: (Կօրծիպիւս գրամ կուտայ) ի՞նչ, ի՞նչ կընէք:

Կօրծիպիւս.

Գիտեմ ինչ եմ պարտական ձեզ:

Մեանարէլ.

Կը ծաղրէ՞ք պարոն Կօրծիպիւս, ես չեմ առ-

նիր, ես վարձքով աշխատող մարդ չեմ (գրամն կ'առնէ): Ձեր ամենախոնարհ ծառան:

(Մեանարէլ կը մեկնի եւ Կօրծիպիւս սուն կը մեկնի).

ՏԵՍԻԼ Թ.

Վ.Ա.Լ.Ի. (Սեանարէլ)

Ձգիտեմ թէ Սքանարէլն ի՞նչ ըրաւ, ընաւ լուր չ'առի. եւ շատ մտահոգ եմ թէ ո՞ւր արդեօք կարող կը լինիմ հանդիպել իրան: (Սքանարէլ կը գայ ծառայի զգեստով): Բայց ո՞հ, ահաւասիկ նա է: Եյ լաւ, Սքանարէլ, ի՞նչ ըրիր, քանի քեզ չեմ տեսել....:

ՏԵՍԻԼ Ժ.

Վ.Ա.Լ.Ի., ՍԵԱՆԱՐԷԼ

Մեանարէլ.

Հրաշա՛լիք, հրաշա՛լիք: Այնպէս լաւ կատարեցի որ Կօրծիպիւս զիս մի ճարտար բժիշկ կարծեց: Ընդունուեցայ իր տանն, խորհուրդ տուի որ օդափոխութիւն ընել տայ աղջկանն՝ որն այժմ իրանց պարտէզի ծայրն գտնուող մի բնակարանի մէջն է, այնպէս որ շատ հեռի է ծերուկէն եւ դուք կարող էք երթալ զինքն տեսնել հանդիստ կերպով:

Վ.ալէո.

Ո՞հ որքա՞ն կուրախացնէք զիս: Առանց ժամանակ կորսցնելու երթեմ իսկոյն գտնեմ զինքն: (Կը մեկնի)



12434-58
 9000

Մեանարէլ.

Պէտք է խոստովանիլ որ սա բարի Կօրծի-
պիւան մի կատարեալ թանձրամիտ մարդ է, որ
այսպէսով կը խաբուի: (Նշմարելով Կօրծիպիւանն)
ո՛հ, վկայ Աստուած, ամեն ինչ կորաւ, ահա այս
հարուածով բժշկութիւնս տապալեցաւ. բայց պէտք
է որ զինքն խաբեմ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՍՔԱՆՍԱՐԷԼ, ԿՕՐԺԻՊԻՒՍ

Կօրծիպիւս

Բարի լոյս պարոն:

Մեանարէլ.

Պարոն ձեր խոնարհ ծառան եմ. տեսէք մի
խեղճ երիտասարդ յուսահատութեան մէջ. կը ճանչ-
նա՞ք արդեօք մի բժիշկ որ քիչ ատենէ ի վեր այս
քաղաքը եկել է եւ հիանալի բուժումներ կը կա-
տարէ:

Կօրծիպիւս

Այո, ես զինքն կը ճանչնամ, այժմ իսկ դուրս
ելաւ իմ տունէս:

Մեանարէլ

Ես նորա եղբայրն եմ, պարոն. մենք երկուոր-
եակ ենք. եւ որովհետեւ միմեանց շատ կը նմա-
նինք՝ մարդիկ երբեմն մեզ կը շփոթեն:

Կօրծիպիւս.

Սատանան տանի զիս, որ ես ալ պիտի խա-
բուէի. եւ ի՞նչպէս կը կոչուիք դուք:

Մեանարէլ.

Ներսէս, պարոն, ձեր ծառան Հարկ է գիտնաք որ
իւր աշխատանոցն գտնուելով ոգելից երկու սըր-
ուակներ թափեցի, որոնք սեղանին եզրն էին զըր-
ուած: Ինձ դէմ իսկոյն այնքան ծայրայեղ բարկու-
թիւն զգաց, որ զիս տնէն դուրս նետեց. այլեւս
երբէք չ'ուզէր զիս տեսնել. այնպէս որ այժմ ես
մի խեղճ մարդ եմ, առանց պաշտպանի, առանց ո
եւ է ծանօթի:

Կօրծիպիւս.

Հաւ, ես կը հանդարտեցնեմ, ես իւր բարե-
կամներէ մին եմ, եւ կը խոստանամ ձեզ հաշտե-
ցնել նորա հետ, երբ զինքը տեսնեմ՝ նախ այդ կը-
խօսիմ:

Մեանարէլ.

Շատ երախտապարտ կը լինիմ ձեզ, պարոն
Կօրծիպիւս: (Սքանարէլ դուրս կ'երթայ եւ իսկոյն
կը վերադառնայ բժշկի զգեստով):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՍՔԱՆՍԱՐԷԼ, ԿՕՐԺԻՊԻՒՍ

Մեանարէլ

Պէտք է ըսել որ երբ այս հիւանդներն չեն
ուզեր հետեւիլ բժշկի խորհուրդներին եւ ինքզինք-
նին կերուխոււմի կտան...:

Կօրծիպիւս.

Պարոն բժիշկ, ձեր խոնարհ ծառան, մի չնորհ
կը խնդրեմ:

Մանարէլ.

Ի՞նչ է այն, պարոն, հա՞րկ է արդեօք ձեզ մի՞
ծառայութիւն ընել:

Կօրժիպիւս.

Պարոն այժմ հանդիպեցայ ձեր եղբօր, որ բո-
լորովին վշտացած է թէ...»

Մանարէլ

Նա մի սրիկայ է, պարոն Կօրժիպիւս:

Կօրժիպիւս

Կը վստահացնեմ որ նա ձեզ բարկացուցած
լինելուն համար այնքան ցաւ կը զգայ որ...»

Մանարէլ.

Պարոն Կօրժիպիւս՝ նա մի հարբող է:

Կօրժիպիւս.

Ո՛հ պարոն, դուք կ'ուզէք յուսահատեցնել՞
այդ խեղճ տղան:

Մանարէլ:

Նորա մասին այլ եւս մի խօսիք ինձ: Բայց
տեսէք այդ ստահակի անխոհեմութիւնն, որ եկել
ձեզ գտել է հաշտեցնել տալու համար. կը խնդրեմ
չի խօսիք նորա մասին:

Կօրժիպիւս

Ի սէր Աստուծոյ, պարոն բժիշկ, կատարեցէք
այս՝ իմ սիրոյս համար: Եթէ մի ուրիշ բանի մէջ
կարող եմ ձեզ գոհացնել, բոլոր սրտովս կը կատա-
րեմ զայն: Ես յանձն առի եւ...»

Մանարէլ.

Այնքան թախանձանօք կը խնդրէք...: Թէեւ
երգուել եմ երբէք չի ներել նրան. լաւ, տուէք
ձեր ձեռքն, կը ներեմ իրան: Կը վստահացնեմ ձեզ,
որ դժուարաւ կը զսպեմ բարկութիւնս, եւ այս
ձեզ մեծ հաճոյակատարութիւն ընելու համար: Մը-
նաք բարով պարոն Կօրժիպիւս:

(Կօրժիպիւս իւր տունն կը մտնէ եւ Մանարէլը կը մեկնէ)

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՎԱՍԷՌ՝ ՍԲԱՆԱՐԵԼ

ՎԱՂԵՆ

Կը խոստովանիմ որ երբէք յոյս չ'ունէի թէ
Սքանարէլ այսքան լաւ կատարէ իր պաշտօնն:
(Սքանարէլ ներս կը մտնէ ծառայի զգեստով) Ո՛հ
իմ բարի մարդուկս, քեզ որքան երախտապարտ եմ,
որքան ուրախ եմ եւ որքան...»

Մանարէլ.

Իրաւ որ հեշտ հեշտ կը խօսիք: Կօրժիպիւսն
ինձ հանդիպեցաւ, եւ եթէ մի հնարք չի ստեղծէի,
բանն ամբողջ երեւան պիտի ելնէր: (Կօրժիպիւսն
նշմարելով) Բայց փախէք, ահա ինքն է:

(Վաղէն դուրս կ'երթայ)

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԿՕՐԺԻՊԻԵՍՍ՝ ՍԲԱՆԱՐԵԼ

Կօրժիպիւս

Ամեն կողմ ձեզ կ'որոնեմ բսելու որ ձեր եղ-

բօր հետ տեսակցեցայ. ինձ վստահացուց թէ ձեզ կը ներէ, բայց որպէս զի աւելի ապահով լինիմ, կ'ուզեմ որ ձեզ իմ ներկայութեանս համբուրէ. մտէք իմ բնակարանս եւ ես երթամ զինքն բերեմ:

Սեանաւել.

Էյ, պարոն Կօրծիպիւս, չեմ կարծեր թէ այժմ կարենաք զինքն գտնել, եւ ապա ես չեմ մնար ձեր տանն, նորա բարկութենէ կը վախնամ:

Կօրծիպիւս.

Ոհ, դուք այնտեղ պիտի մնաք, վասն զի ես ձեզ կը փակեմ: Այժմ երթամ ձեր եղբայրն գրտնեմ, ոչինչ, մի վախնաք, կ'ապահովեմ ձեզ, որ նա այլ եւս բարկութեան մէջ չէ:

(Կօրծիպիւս դուրս կ'երթայ)

Սեանաւել.

[Պատուհանէն].— Իրաւ որ օձիքս լաւ ձեռք տուի, այլ եւս խուսափելու հնար չիկայ, երկինք շատ ամպոտեցաւ եւ շատ կը վախնամ որ պայթի եւ ուսերուս գաւազանի անեղ հարուածներ տեղայ եւ կամ բժիշկների բոլոր դեղագիրներէն աւելի դօրաւոր մի դեղագրով գոնէ, գոնէ ուսերուս խարաններ փակցնէ: Գործերս գէշ կ'երթան, բայց ինչո՞ւ յուսահատիլ, քանի որ այսքանն ըրի, խարէութիւնը մինչեւ վերջը տանինք: Այո, այո, պէտք է դեռ առաջ երթալ, եւ ցոյց տալ որ Սքանարէլ խարեբաների թագաւորն է:

(Սեանաւել պատուհանէն կոստուռ եւ կ'երթայ)

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԿՐՕ-ՌԸՆԵ, ԿՕՐԺԻՊՈՒՒՍ, ՍՔԱՆՍՐԷԼ

Կրօ-Ռընէ.

Ոհ, անաւասիկ մի ծիծաղելի բան, այստեղ ինչպէս սատանի նման պատուհանէն կը թոյնն: Պէտք է սպասել եւ տեսնել թէ սորա վերջն ինչ պիտի լինի:

Կօրծիպիւս.

Այս բժիշկը չպիտի կարենամ գտնել. չը գիտեմ ո՞ր սատանի անկիւնը պահուել է: (Տեսնելով որ Սքանարէլ կուգայ բժշկի զգեստով) բայց անաւասիկ նա: Պարոն այժմ չի բաւեր միայն ձեր եղբօր ներքիլ, իմ գոհունակութեան համար կը խնդրեմ որ համբուրէք զինքն. նա իմ տանն է եւ ես ամեն կողմ ձեզ կ'որոնէի խնդրելու, որ այդ հաշտութիւնը իմ ներկայութեան կատարուի:

Սեանաւել.

Կը ծաղրէ՞ք, պարոն Կօրծիպիւս, չի՞ բաւեր որ կը ներեմ իրան, երբէք չեմ ուզեր զինքն տեսնել:

Կօրծիպիւս.

Բայց պարոն, իմ սիրոյս համար:

Սեանաւել.

Ոչինչ կարող եմ ձեզ մերժել, ըսէք որ վար իջնէ, (մինչ Կօրծիպիւս տուն մտնէ գոնէն, Սքանարէլ ալ կը մտնէ պատուհանէն):

Կօրծիպիւս (Պատուհանէն)

Ահա ձեր եղբայրը ներքեւը ձեզ կը սպասէ, ինձ խոստացաւ որ ինչ որ ուզէք պիտի կատարէ:

Սխանարէլ. (Պատուհանէն)

Պարոն Կօրծիպիւս, խնդրեմ այստեղ բերել տաք, կերդնում ձեզ որ միմիայն առանձնութեան մէջ իրմէ ներողութիւն կը խնդրեմ, վասն զի ամենքին առջեւ իմ գլխին անյուշտ հարիւր նախատինք եւ հարիւր հայտոյանք կը տեղացնէ:

(Կօրծիպիւս սեկն դուրս կուգայ դռնէն, եւ Սխանարէլ պատուհանէն)

Կօրծիպիւս

Գլխուս վրայ, երթամ ըսեմ իրան... Պարոն նա կ'ըսէ թէ կ'ամհնայ եւ կը խնդրէ որ դուք ներս երթաք որպէս զի ձեզնէ ներողութիւն խնդրէ առանձին: Ահա ձեզ բանալիք, կարող էք մտնել, կը թախանձեմ որ չի մերժէք եւ ինձ այս գոհունակութիւնը պատճառէք:

Սխանարէլ.

Բան չկայ որ ձեր գոհունակութեան համար չի գործադրեմ, դուք հիմակ պիտի լսէք թէ ի՞նչ կերպով կը վարուիմ իրան հետ (Պատուհանէն) Ոհ, ահա՛, դու սրիկայ:—Պարոն եղբայրս ներողութիւն կը խնդրեմ, կ'երդնում որ յանցանք չ'ունէի:—Գինեմոլ, սրիկայ, կորիւր, ես քեզ կը սովորեցնեմ որ համարձակուել ես եւ անհանգիստ ընել մեր պարոն Կօրծիպիւսն, գալ գլուխն ցաւցնել քու յիմարութիւններով:—Պարոն եղբայրս...:—Ձայնդ կտրէ,

քեզ կ'ըսեմ:—Ես ձեզ կը հնազանդ...—Պապանձէ, սրիկայ:

Կրօ-Ռընէ,

Այս պահուս ո՞ր սատանան կը մտածէ որ ձեր տանն է:

Կօրծիպիւս

Բժիշկն եւ իւր եղբայրն Ներսէս, իրանց մէջ քիչ անհամաձայնութիւն կար եւ հիմակ կը հաշտուին:

Կրօ-Ռընէ

Սատանան տանի, երկուսը մի անձ է:

Սխանարէլ (Պատուհանէն).

Հարբած, ես քեզ կը սովորեցնեմ այդպէս խօսիլ: Ինչպէս աչքերը կը խոնարհեցնէ, լաւ հասկըցաւ որ սխալուած է տխարը, ոհ, կեղծաւոր, ինչպէս բարի սուրբ կը ձեւանայ:

Կրօ-Ռընէ

Պարոն, հաճեցէք ըսել սորան որ իր եղբայրն պատուհանը կանչէ:

Կօրծիպիւս

Շատ լաւ... Պարոն բժիշկ խնդրեմ որ ձեր եղբայրն պատուհանն գայ:

Սխանարէլ (Պատուհանէն).

Նա պատուաւոր մարդկանց երեւնալու աշարժան է, եւ ապա իմ ներկայութեան չի համարձակիր:

Կօրժիպիւս

Պարոն, այդ շնորհն ալ մի մերժէք ինձ, քանի որ արդէն այնքանն ըրիք:

ՍԲԱՆԱՐԷԼ (Պատուհանէն)

Ճշմարիտ որ պարոն Կօրժիպիւս դուք իմ վըրայ այնքան ազդեցութիւն ունիք որ ես ոչինչ կարող եմ մերժել ձեզ: Սրիկայ, եկ, երեւացիր: (Մի բոպէ աներեւոյթ լինելէ վերջ ծառայի զգեստով նորէն կ'երեւի) Պարոն Կօրժիպիւս, ձեզ երախտապարտ եմ: (Դարձեալ աներեւոյթ կը լինի եւ բժշկի զգեստով անմիջապէս կ'երեւի) Է, լաւ, տեսա՞ք այն ստահակի դէմքն:

ԿՐօ-ՌԵՃԷ

Հաւատքս վկայ, երկուսը միայն մի մարդ են, եւ այդ հաստատելու համար ըսէք որ կը փափազիք մի պահ երկուսը միասին տեսներ:

Կօրժիպիւս

Բայց բարեհաճեցէք ձեզ հետ իմիասին ցոյց տալ զինքն եւ պատուհանին առջեւ համբուրուեցէք:

ՍԲԱՆԱՐԷԼ (պատուհանէն)

Դա մի բան է զոր միմիայն ձեզ չեմ կարող մերժել, բայց ցոյց տալու համար որ կ'ուզեմ ամեն բան ի գործ դնել ձեր սիրոյն համար, դորան ալ կը հաւանիմ, թէ եւ ահամայ, եւ կ'ուզեմ որ նախ եւ առաջ ձեզ պատճառած բոլոր նեղութեանց համար ներողութիւն խնդրէ:—Ս,յո, պարոն Կօրժիպիւս ձեզ

այսքան նեղացնելուս ներողութիւն կը խնդրեմ, եւ ձեզ կը խոստանամ եղբայր իմ, ի ներկայութեան Կօրժիպիւսի, որ ահաւասիկ, յետ այսօրիկ վարուել այնպէս լաւ, որ քնաւ տեղիք չ'ունենաք դժգոհանալու, եւ կաղաչեմ որ այլ եւս չը յիշէք ինչ որ եղած էր: (Կը համբուրէ զլիսարկն եւ փոթօձիքն զորս արմուկին ծայրն զրած է):

Կօրժիպիւս

Է լաւ, ահա չէ՞ որ երկուսն իմիասին են:

ԿՐօ-ՌԵՃԷ

Ո՛հ, հաւատքս վկայ կախարդ է նա:

ՍԲԱՆԱՐԷԼ (Տուճէն դուրս կուգայ բժշկի զգեստով)

Պարոն, ահա ձեր տան բանալին ձեզ կը վերադարձնեմ, չուզեցի որ այդ սրիկան ինձ հետ վար իջնէ, վասն զի ինձ ամօթ է, չեմ կամենար որ ինձ հետ տեսնեն զինքն քաղաքին մէջ ուր որոշ համբաւ կը վայելեմ: Դուք դուրս հանեցէք զինքն որ ժամանակ որ կամենաք: Յ'տեսութիւն եւ ձեր ծառան եմ,—եւ այլն: (Երթալ կը ձեւացնէ եւ իւր զգեստներն վար դնելէ յետոյ, պատուհանէն տուն կը մտնէ):

Կօրժիպիւս

Հարկ է երթալ ազատել այդ խեղճ տղան. եթէ արդարեւ բժիշկն ներեցնրան՝ շատ ալ վատ վարուեցաւ: (Տուն կը մտնէ եւ կը վերադառնայ Աքանաբէլի հետ՝ որ ծառայի զգեստ հագած է):

Մեանաբեր

Պարոն, չնորհակալ եմ ձեր կրած նեղութեանց
եւ բարեացակամութեան համար, մինչեւ մահս եւ
բախտապարտ պիտի մնամ:

Կրօն-ընկ

Այժմ բժիշկն ո՞ր տեղ է կը կարծէք:

Կօրծիպիւս

Մեկնեցաւ:

Կրօն-ընկ (որ Մեանաբերի զգեսներն հաւաքած բռնած է)

Նա թեւիս ներքեւն է, ահաւասիկ սրիկան,
որ բժիշկ կը ձեւանար եւ ձեզ կը խարէր, եւ սա-
կայն մինչ նա ձեզ կը խարէ եւ ձեր տանը խեղկա-
տակութիւն կ'ընէ, Վաղէս եւ ձեր աղջիկն ի միա-
սին ամեն ինչ կը կատարեն:

Կօրծիպիւս

Ո՛հ, որքան դժբաղդ եմ, բայց դու կախաղան
պիտի հանու իս խարերայ, սրիկայ:

Մեանաբեր

Պարոն, զիս կախել տարով ի՞նչ կը լինի, մի
խօսք ըսեմ լսեցէք, ճիշտ է որ իմ հնարքի չնորհիւ
իմ տէրս ձեր աղջկայ հետ է, բայց եթէ ես արքովս
ծառայեցի՝ դրա համար դուք ալ ոչ նուազ երախ-
տապարտ էք ինձ, վասն զի ձեր աղջկայ համար
այս էր յարմար՝ թէ տոհմի եւ թէ հարստութեան
տեսակէտով, հաւատացէք ինձ, չ'ըլլայ թէ երբէք
ազմուկ հանէք, որով դուք սեւերես կը լինիք, եւ

այդ Վիպարքէնը թողէք կորսուի: Բայց ահա մեր
սիրահարներն:

ՏԵՍԻԼ ԺՁ.

ՎԱԼԷՌԻ, ԼԻԻՍԻԼ, ԿՕՐԺԻՊԻԻՍ, ՍՔՍՆԱՐԷԼ

Վալէս.

Ձեր ոտքերն կընկնինք:

Կօրծիպիւս

Կը ներեմ ձեզ եւ երջանիկ եմ Սքանարէլէն
խարուելով ձեզ պէս մի քաջ փեսայ ունենալուս:
Երթանք ամենքս հարսանիքն կատարել եւ խմել
ամենքի կենացը:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.





22
10 -

Ա. Բ.

2281

ԹԱԳՄԱՆՁԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Ընկերիկը նորավեց
Կեղծ Ազնուուհի (Մոլիերի)
Թուշող բժիշկն »

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

2013

